

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորներ Ավետ Ադոնցի, Արմեն Աշոտյանի, Արմեն Ռուստամյանի, Նաիրա Զոհրաբյանի, Կարեն Ճշմարիտյանի և Մանվել Բադեյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կողմ է նախագծով առաջարկվող գաղափարին, սակայն կարծում է դրա իրականացումը պահանջում է որակյալ կադրեր, ֆինանսական ներդրումներ, իսկ վերջնական նպատակին կարելի է հասնել քայլ առ քայլ: Այդ նպատակի իրականացման առաջին իրավական քայլերից է Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնության կարգով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացրած «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն

կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը, որը Ազգային ժողովի 2008 թվականի դեկտեմբերի 4-ի նիստում ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ: Փաթեթի նպատակը Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը Եվրոպական համայնքների օրենսդրությանը աստիճանաբար մերձեցումն է, որի գործուն մեխանիզմներից մեկն էլ իրավական ակտերի նախագծերի ազդեցության գնահատման ինստիտուտի ներդրումն է: Օրենքի կիրարկումից, որոշակի աշխատանքների իրականացումից և փորձառություն ձեռք բերելուց հետո միայն կարելի է միջոցներ ձեռնարկել հաջորդ քայլերի իրականացման ուղղությամբ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայումս նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-364-31.10.2008-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
և լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002թ. փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 47 հոդվածում՝

1. 4-րդ մասում «բ» ենթակետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել նոր «գ» ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝

«գ) օրենքի նախագծի՝ եվրոպական օրենսդրությանը համապատասխանության մասին տեղեկանքը:»

2. լրացնել նոր «4.1» մաս հետևյալ բովանդակությամբ՝

«4.1 Օրենքի ընդունման հիմնավորումը՝

ա) բացատրում է օրենքի ընդունման անհրաժեշտությունը և նպատակը.

բ) ներկայացնում է կարգավորման առարկա հանդիսացող ոլորտում առկա իրադրությունը.

գ) ընդգծում է տարբերությունը առկա և նախագծվող իրավական վիճակների միջև.

դ) ներկայացնում է օրենքի ընդունումից բխող ենթադրվող սոցիալական, տնտեսական, ֆինանսական, իրավական և այլ հետեւանքները.

ե) նշում է ֆինանսավորման աղբյուրները, եթե օրենքի ընդունման կապակցությամբ ենթադրվում է պետական բյուջեի ծախսերի ավելացում:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն էլ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) ընդունումը պայմանավորված է ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետության կողմից եվրոպական ինտեգրումը որպես արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը ճանաչելու փաստով և մանսավորապես Հայաստանի Հանրապետության օրենքները եվրոպական օրենսդրությանը մոտարկելու գործընթացը կարգավորելու անհրաժեշտությամբ:

Ներկայումս բացակայում են Հայաստանի Հանրապետության օրենքների եվրոպական օրենսդրությանը մոտարկելու կոնկրետ իրավական մեխանիզմները:

Օրենքի նախագծին կամ նախագծերի փաթեթին կից ներկայացվող տեղեկանքը օրենքի նախագծի՝ եվրոպական օրենսդրությանը համապատասխանության մասին կիսթանի նախագծի հեղինակներին ավելի մանրամասն ուսումնասիրելու կարգավորման առարկա հանդիսացող ոլորտը, այդ թվում՝ եվրոպական զարգացած պետությունների փորձը, կատարած աշխատանքները և օրենսդրական լուծումները:

Մյուս կողմից, վերոհիշյալ տեղեկանքի ներկայացումը կնպաստի օրենսդիր մարմնին օրինագծի համեմատական-իրավական վերլուծության, գնահատական տալու և ճիշտ որոշում կայացնելու գործընթացներում:

Օրենքի ընդունման հիմնավորման հասկացության չակերտների բացումը և մանրամասնումը օրենքում նպատակ ունի օրենսդրորեն ամրագրելու այն հիմնական և պարտադիր տեղեկատվության տրամադրումը, որի բացակայության դեպքում տվյալ օրենքի ընդունման պատճառները, հիմքերը և հետեւանքները անհայտ կմնան ինչպես որոշում կայացնողների, այնպես էլ լայն հասարակության համար:

Նմանատիպ պրակտիկա առկա է մի շարք եվրոպական երկրներում, ավելին՝ խորհրդարանի նախագահը նույնիսկ իրավունք ունի պահանջելու, որպեսզի պահպանվեն օրենքի ընդունման հիմնավորմանը ներկայացվող բոլոր պահանջները, հակառակ դեպքում օրինագիծը հանվում է պաշտոնական շրջանառությունից (Լեհաստան, Սլովենիա)

